## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

9 օգոստոսի 2022 թվականի թիվ 294-Ա

## «ՀԱՅՓՈՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի օգոստոսի 9-ի նիստում, քննարկելով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

Ֆիզիկական անձ Օվսաննա Սիմոնյանը 2022 թվականի հուլիսի 29-ին, իսկ ֆիզիկական անձ Դավիթ Իսկանդարյանը 2022 թվականի հուլիսի 31-ին Հանձնաժողով են ներկայացրել գրություններ (այսուհետ նաև՝ **Հաղորդումներ**)՝ հայտնելով, որ «Բեր-Բեր» բեռնափոխադրող ընկերությունը բազմաթիվ հաճախորդների փաթեթների ճակատագիրն արդեն մեկ ամիս թողել է օդից կախված: «Berber.am»-ը, որը հանդիսանում է «ՀայՓոստ Յու Էս Էյ Քորփ-ի այսպես կոչված դուստր կազմակերպություն, օնլայն շոփինգի ոլորտում է 2021 թվականի նոյեմբերից, և հաճախորդներից շատերի հավաստմամբ, այդ օրից ի վեր գրեթե ոչ մի փաթեթ չի առաքել ակնկալվող ամսաթվով:

Հաղորդումներ ներկայացրած անձինք հայտնել են նաև, որ, ուշացումներից բացի, անհայտ է սպասվող բեռների ճակատագիրը: Մի շարք հաճախորդների կարծիքով հնարավոր է, որ «Բեր-Բեր»-ը կորցրել է փաթեթները, իսկ «Բեր-Բեր»-ի աշխատակիցների հայտնած կցկտուր և ոչ հստակ ժամկետներն արդեն մի քանի անգամ երկարաձգվել են: Ֆիզիկական անձ Դավիթ Իսկանդարյանի նամակներին ի պատասխան՝ «Բեր-Բեր»-ի աշխատակիցները հայտնել են փաթեթի առաքման լրիվ տարբեր ամսաթվեր՝ հայտնելով, որ 2022 թվականի հուլիսի 28-ի դրությամբ փաթեթը Լյուքսեմբուրգում է, այնինչ օրեր առաջ վերջինիս հավաստիացրել էին, որ ամենաուշը հուլիսի 28-ին իր փաթեթները մուտք կգործեն ՀՀ:

Հաղորդումներում նշված է նաև երեք դեպք, որտեղ առաքման ժամկետները նույնպես խախտվել են: «Բեր-Բեր»-ը ՀՀ օդային առաքման համար սահմանում է առավելագույնը տասն աշխատանքային օր, բայց «Բեր-Բեր»-ից տուժող երկու տասնյակ անձինք մեկ ամիս է չունեն ոչ մի հստակ ամսաթիվ, թե բեռները ՀՀ երբ մուտք կգործեն:

Հաղորդումներ ներկայացրած անձինք հավելել են, որ այժմյան «Բեր-Բեր» բեռնափոխադրողը Ընկերության նախկին «Shop in America» բեռնափոխադրող ընկերությունն է պարզապես նոր բրենդինգով:

Ֆիզիկական անձ Տիգրան Քարամյանը 2022 թվականի հուլիսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել հաղորդում (ի լրումն դրա 2022 թվականի օգոստոսի 2-ին և 8-ին ներկայացնելով երկու հաղորդում, այսուհետ երեքը միասին նաև՝ **Հաղորդում**)՝ հայտնելով, որ «Բեր-Բեր»-ը հայտարարված տասն աշխատանքային օրվա փոխարեն, փաթեթների առաքումն ուշացնում է ամիսներով՝ առանց հստակ բացատրության և պատճառաբանության: «Բեր-Բեր»-ի աշխատակիցների կողմից հստակ ինֆորմացիա չի տրամադրվում բեռների գտնվելու վայրի մասին, ավելին, ժամանման ամսաթվերը չեն թարմացվում ժամանակին, «Բեր-Բեր»-ը փոփոխում է առաքման ժամկետները, սպառողների մի մասին տրամադրում է զեղչեր, մի մասին՝ ոչ:

Հաղորդում ներկայացրած անձը նշել է, որ բեռնափոխադրումների սակագներից ուշացումների հետ կապված զեղչեր կամ չեն լինում, կամ լինում են 5-10% չափով, ինչը չի ծածկում «Բեր-Բեր»-ի կողմից հաճախորդներին հասցված վնասը, քանի որ կան ապրանքներ, որոնք սպառման կամ վերադարձման ժամկետներ ունեն: Ավելին, կան դեպքեր, երբ հաճախորդների կցված բանկային քարտերից, առանց հաճախորդի թույլատրության, գանձել են գումար՝ փաստացի չիրականացրած ծառայությունների համար:

Հաղորդում ներկայացրած անձը նշել է նաև, որ «Բեր-Բեր»-ը սոցիալական հարթակներում իրականացնում է «վատ մեկնաբանությունների մաքրում»՝ պոտենցիալ նոր հաճախորդներ ներգրավելու համար:

Բացի այդ, հանրային հնչեղություն հաղորդելու ֆոնի վրա «Բեր-Բեր»-ն իր գրասենյակի դիմային հատվածից հեռացրել է իր որոշ գովազդային վահանակներ, ինչպես նաև սկսել է կայքում իրականացնել փոփոխություններ՝ կապված դրույթների և պայմանների հետ:

Ի կատարումն Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 180-Ա հրամանի ք. Երևան Սարյան 25 հասցեում գործող օբյեկտում իրականացվել է դիտանցում (այսուհետ նաև՝ **Դիտանցում**), որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 180 արձանագրությունը:

Դիտանցման արդյունքում պարզվել է, որ «Բեր-Բեր»-ը Ընկերության կողմից իրականացվող առցանց գնված ապրանքների միջազգային փոխադրման ծառայության անվանումն է և չի հանդիսանում ընկերություն:

Ի կատարումն Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 179-Ա հրամանի՝ «berber.am» կայքում (այսուհետ նաև՝ **Կայք**) իրականացվել է արտաքին դիտում, որի

արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 179 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 179 արձանագրություն**):

Թիվ 179 արձանագրության համաձայն՝ Կայքի «առաքման մեթոդներ և սակագներ» բաժնում հրապարակված է հետևյալը.

«ԱՄՆ Դելավեր առաքման ժամկետ (օդային, 4 500 դրամ, 1 կգ արժեք)

- Բեր-Բեր գրասենյակ մինչև 10 աշխ. օր,
- Երևան հայփոստ բաժանմունքներ մինչև 11 աշխ. օր,
- Մարզային հայփոստ բաժանմունքներ մինչև 12 աշխ. օր,
- Արցախ փոստային բաժանմունքներ մինչև 15 աշխ. օր:

ԱՄՆ Կալիֆորնիա առաքման ժամկետ (օդային, 4 500 դրամ, 1 կգ արժեք)

- Բեր-Բեր գրասենյակ մինչև 10 աշխ. օր,
- Երևան հայփոստ բաժանմունքներ մինչև 11 աշխ. օր,
- Մարզային հայփոստ բաժանմունքներ մինչև 12 աշխ. օր,
- Արցախ փոստային բաժանմունքներ մինչև 15 աշխ. օր:»:

Ի կատարումն Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 181-Ա հրամանի՝ «haypost.am» կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 181 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 181 արձանագրություն**):

Թիվ 181 արձանագրության համաձայն՝ «haypost.am» կայքի «Հայփոստ ԱՄՆ» բաժնում, ի թիվս այլնի, հրապարակված է հետևյալը.

««HayPost USA»-ը Հայփոստի դուստր ձեռնարկությունն է, որն ապահովում է ԱՄՆ-ից Հայաստան և Հայաստանից ԱՄՆ ապրանքների արագ և հուսալի առաքում: (…): Այցելեք մեր գրասենյակ Գլենդելում (124 N Brand Blvd, Glendale, CA 91203), առաքեք ձեր ծանրոցը, և ձեր հարազատները կստանան այն Հայաստանում 5-10 աշխատանքային օրվա ընթացքում: Հասցե՝ ԱՄՆ, Կալիֆորնիա 91203, Գլենդել, Նորթ Բրենդ Բուլվար, 124, Հեռախոսահամար՝ +1 818-732-7678, Հեռախոսահամար Հայաստանում՝ +374 10 514-514»:

Ի կատարումն Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 182-Ա հրամանի՝ «https://radar.am/hy/news/social-2518112509/?fbclid=IwAR1zWNlxMdjclhiLSb9As7I9MMQAtmdhzrpBHu5MYr4lKoZml-cknjSdv3E» հղումով կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 182 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 182 արձանագրություն**):

Թիվ 182 արձանագրության համաձայն՝ «https://radar.am/hy/news/social-2518112509/?fbclid=IwAR1zWNlxMdjclhiLSb9As7I9MMQAtmdhzrpBHu5MYr4lKoZml-cknjSdv3E» հղումով կայքում հրապարակված է հետևյալը.

««Չբեր-Բեր» տուժած քաղաքացիները կդիմեն դատարան՝ առաքանիները տեղ չհասցնելու պատճառով: (…), «Բեր-Բեր»-ը պարզապես խաբում է քաղաքացիներին՝ չառաքելով պատվերները: (…), մի խումբ քաղաքացիներ սոցիալական ցանցերից մեկում ստեղծել են «Չբեր-Բեր» խումբը (…):»:

Ի կատարումն Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 178-Ա հրամանի՝ «https://www.facebook.com/berber.armenia/?ref=ge_internal» ֆեյսբուքյան էջում (այսուհետ նաև՝ **Ֆեյսբուքյան էջ**) իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 179 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 179 արձանագրություն**):

Թիվ 179 արձանագրության համաձայն՝ Ֆեյսբուքյան էջի «Մեկնաբանություններ դաշտում», ի թիվս այլնի, հրապարակված է հետևյալը.

«Արտերկրից բեռնափոխադրումներ և առաքման ծառայություն իրականացնող «Բեր-բեր» ընկերությունը, որ պատկանում է «Հայփոստին», (…), խոստանում է 5-10 օրվա ընթացքում բեռը Ամերիկայից հասցնել տեղ, սակայն շաբաթներով, երբեմն ամսից ավել ձգելով տեղ չի հասցնում: (…)»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը,

որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից «Բեր-Բեր» ծառայության միջոցով ԱՄՆ-ից (Դելավեր, Կալիֆորնիա, Բեր-Բեր գրասենյակ) ՀՀ օդային առաքման առավելագույն ժամկետը մինչև տասն աշխատանքային օր հայտարարելն այն դեպքում, երբ այդ ծառայության ժամկետը գործնականում գերազանցում է Ընկերության կողմից հայտարարված առավելագույն ժամկետը, առերևույթ պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 9

Երևան